


## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Նոյեմբերի 2-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Նոյեմբերի 6-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վարդան քհն. Մըկըրտչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եւ մի՛ ումեք պարտապան գտանիցիք, բայց զմիմեանս սիրելոյ» (Առ Հռովմայեցիս ԺԳ 8) բնաբանով:

*
* *

**Նոյեմբերի 9-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Նոյեմբերի 16-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Նոյեմբերի 20-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Փառք Ս. Խաչին, ալելուիա, Խաչեցելոյն, ալելուիա, Սրբոյ թաղմանն, ալելուիա, Սուրբ Յարութեանն, ալելուիա» (շարական) բնաբանով:

*
* *

**Նոյեմբերի 27-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 49):

*
* *

**Նոյեմբերի 29-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

**Դեկտեմբերի 8-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

*
* *

**Դեկտեմբերի 11-ին, կիրակի.—Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 36):

Հավարտ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ երկրաշարժից զոհվածների հիշատակի համար:

*
* *

**Դեկտեմբերի 25-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը: «Հայր Մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուրուգվայի հայոց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հակոբ ծայրագույն վրդ. Գըլնճյանը՝ «Զարթիր, զարթիր, Սիոն, զգեցիր զզօրութիւն քո, Սիոն, և դու զգեցիր զփառս քո, Երուսաղէմ» (Եսայի ԾԲ 1) բնաբանով:

*
* *

**Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի.—Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին:**

Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփաննոսի խորանին, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբղ. Կճոյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց: